ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի սեպտեմբերի 7-9-ը ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալներ Վահե Հովհաննիսյանի և Ավագ Ավանեսյանի Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Վահե Հովհաննիսյան, Ավագ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալներ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2022թ. սեպտեմբերի 7-9-ը

4. Հրավիրող կողմը՝

ՌԴ ֆինանսների նախարարություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Մոսկովյան ամենամյա ֆինանսական համաժողովին

6. Քննարկված թեմաները, ձեռք բերված պայմանավորվածությունները, ընդունված որոշումները՝

Այցի շրջանակներում ֆինանսների նախարարի տեղակալները մասնակցել են մի շարք պանելային սեսիաների, այդ թվում՝ «Միջբյուջետային հարաբերություններ. նոր մարտահրավերներ», «Գնումների համակարգը պատժամիջոցների ազդեցությունների ներքո», «ՌԴ ֆինանսական ինքնիշխանությունը, մի՞ֆ, թե՝ իրականություն», «Պետական աջակցության միջոցների տրամադրման կանոնների միասնականացում՝«Ա»-ից «Ֆ»» և այլն:

Այցի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության ֆինանսների փոխնախարար Թիմուր Մաքսիմովի և ՀՀ ֆինանսների փոխնախարարներ Վահե Հովհաննիսյանի և

Ավագ Ավանեսյանի միջև կայացել է աշխատանքային հանդիպում: Նախարարի տեղակալ Վահե Հովհաննիսյանը շնորհավորել է ՌԴ գործընկերներին ֆինանսների նախարարության 220-ամյակի կապակցությամբ:

Հանդիպման ընթացքում քննարկումներ են տեղի ունեցել ՀՀ ֆինանսների նախարարության և ՌԴ ֆինանսների նախարարության միջև ՌԴ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը պետական ֆինանսների կառավարման ոլորտում գիտամեթոդական աջակցության և տեխնիկական օժանդակության տրամադրման մասին համաձայնագրով հաստատված երկկողմ համագործակցության ծրագրի ուղղությունների ընդլայնման վերաբերյալ:

Քննարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների համար ՌԴ համապատասխան ուսումնական հաստատություններում վերապատրաստման հնարավորություններին առնչվող հարցերը: Վ. Հովհաննիսյանի կողմից բարձրացվել է նաև ՀՀ մյուս բոլոր գերատեսչությունների աշխատակիցների համար նույնպես նման հնարավորության ստեղծումը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել նախ պիլոտային ծրագիր իրականացնել ՀՀ և ՌԴ ֆինանսների նախարարությունների միջև համաձայնագրի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների համար: Ռուսական կողմն առաջարկեց զուգահեռաբար քննարկել համանման նախաձեռնության իրականացումը ԵԱՏՄ անդամ-երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ նաև դիտարկելով Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի (ԿԶԵՀ) աջակցության միջոցները:

Անդրադարձ է կատարվել նաև ԿԶԵՀ կանոնադրական փաստաթղթերում ընթացիկ փոփոխություններին: Ռուսական կողմն ընդգծել է, որ փաստաթղթերի ներկա նախագծերի վերաբերյալ այս պահին առկա են բոլոր մյուս անդամ երկրների համաձայնությունները, ինչը նաև ակնկալում են հայկական կողմից: Հայկական կողմց նշվել է, որ բոլորի համաձայնության պարագայում հայկական կողմը չի խոչընդոտի փաստաթղթերի հետագա ընթացքին և նույնպես կողմ կարտահայտվի:

Համաժողովի ընթացքում տեղի է ունեցել խորհրդակցություն նաև ՌԴ ֆինանսների փոխնախարար Ալեքսեյ Լավրովի և ՀՀ ֆինանսների փոխնախարարներ Վահե Հովհաննիսյանի և Ավագ Ավանեսյանի մասնակցությամբ,

որը հիմնականում ընթացել է պետական գնումների ոլորտում ՀՀ և ՌԴ էլեկտրոնային թվային ստորագրությունների փոխադարձ ճանաչման գործընթացի շուրջը: Նախատեսվել է քննարկումները շարունակել մասնագետների մակարդակում՝ ՌԴ-ում կազմակերպվող գնման ընթացակարգերին ՀՀ ռեզիդենտների մասնակցությունը ապահովելու ուղղությամբ:

Հայկական կողմից հետաքրքրություն է ցուցաբերվել նաև ծանոթանալու «էլեկտրոնային խանութների» և «օֆֆսեթ պայմանագրերի (offset contract)» ոլորտում ՌԴ փորձին:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել քննարկումները և փորձի փոխանակմանն ուղղված աշխատանքները ինչպես փոխնախարարների, այնպես էլ համապատասխան աշխատակիցների մակարդակով:

Նշվել է նաև, որ վերոնշյալ հարցերին առավել մանրամասն անդրադարձ կկատարվի ս.թ. հոկտեմբերին Սանկտ Պետերբուրգում կայանալիք համաժողովի շրջանակներում:

ԿԶԵՀ գործընկերների հրավերով ֆինանսների նախարարության պատվիրակության անդամները եղել են նաև Հիմնադրամի մոսկովյան գրասենյակում: Տեղում պատվիրակության անդամները ծանոթացել են ԿԶԵՀ աշխատանքի կազմակերպման մանրամասներին: Անդրադարձ է կատարվել ընթացիկ և առաջիկա ծրագրերին: Հայկական կողմն իր հերթին ընդգծել է ԿԶԵՀ ծրագրերի շրջանակի ընդլայնման անհրաժեշտությունը:

7.Ստորագրությունը, ամսաթիվը

13.09.2022թ.